

Աշխարհագրություն

УДК 911.3.001

Ա. Ռ. ԱՎԱԳ-ՅԱՆ, ՄԱՆԳԱՆԱ ՖԱԹԻՋՈ

**ԻՐԱՆԻ ՆԱՎԹԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ԴԵՐՈՆ ԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԳՈՐԾՈՒՄ**

Իրանը աշխարհում խոշորագույն նավթագազաբեր տարածքներից մեկն է, ընդ որում, ի տարբերություն աշխարհի այլ նավթագազաբեր շրջանների, որոնցում նավթի և գազի ռեսուրսներն ունեն նվազելու միտում, այստեղ վառելիքի պաշարներն ունեն ավելանալու միտում՝ չնայած արդյունահանման մեծ ծավալներին:

Իրանում նավթի և բնական գազի պաշարներն աճում են նաև ի հաշիվ ծովային նոր ավազանների յուրացման: Մեծ հեռանկարներ կան նաև ցամաքային շրջաններում:

Նավթի և բնական գազի հսկայական ռեսուրսները մեծ հեռանկարներ են բացում երկրի տնտեսության զարգացման համար: Այդ ռեսուրսների ճիշտ օգտագործման դեպքում հնարավորություն կստեղծվի.

- մեծացնել համախառն ներքին արդյունքը, ինչը կհամապատասխանի մյուս բնական ներուժ ունեցող երկրին;

- ավելացնել աշխատուժի ներգրավումը (Իրանում դեռևս մեծ է գործազրկությունը, հատկապես գյուղական բնակավայրերում);

- միջազգային շուկա դուրս գալ ոչ թե հումքով, այլ պատրաստի արտադրանքով;

- նավթագազային շրջանների զարգացումով նախադրյալներ ստեղծել մյուս շրջանների զարգացման համար,

- մեծացնել Իրանի դերը աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանման մեջ՝ հատկապես տարածաշրջանում:

Այս ամենի իրագործման համար Իրանին անհրաժեշտ է առաջին հերթին ընդարձակել իր տեղը վառելիքի համաշխարհային շուկայում:

Իրանում են կենտրոնացված նավթի համաշխարհային պաշարների 10%-ը, բնական գազի 16,3%-ը: Մինչդեռ նա տալիս է միջազգային շուկա հանվող նավթի 3,6%-ը, բնական գազի 4,5%-ը, պատճառը Իրանի և գերտերությունների տնտեսական շահերի բախումներն են՝ դրանից բխող քաղաքական հակասություններով:

Նավթը և բնական գազը աշխարհի գերտերությունների գլխավոր կռվանն են, քանի որ նավթի և բնական գազի ռեսուրսները մեծ մասամբ տեղաբաշխված են զարգացող երկրներում, իսկ սպառողները զարգացած երկրներն են: Ահա հենց այս հենքի վրա էլ կառուցված են զարգացող և զարգացած երկրների միջպետական հարաբերությունները [1]:

Նավթի և բնական գազի խոշոր շրջաններում է երկրագնդի «թեժ կետերի» մեծ մասը, որտեղ գերտերությունների կողմից հրահրվում են լոկալ պատերազմներ՝ օգտագործելով միջէթնիկական հակամարտությունները:

Իրանը նավթի հետախուզված պաշարներով (21,9 մլրդ. տ) աշխարհում երրորդ պետությունն է, բնական գազի պաշարներով (29,61 տրիլիոն խ. մ)՝ երկրորդը: Սա է պատճառը, որ իրանը շուրջ 100 տարի գտնվում է նավթ-սպառող գերտերությունների քաղաքական, ռազմական հակամարտությունների դաշտում:

Իրանի կառավարությունների առաջնահերթ խնդիրը միշտ էլ եղել է նավթագազային արդյունաբերությունները օտարներից ազատելը:

Գեռես 1909 թ. Իրանում նավթի հանույթը գտնվում էր անգլո-իրանական ընկերության ձեռքին: 1950 թ. Իրանը ազգայնացրեց այդ նավթային ընկերությունը: 1953 թ. եվրոպական և ամերիկյան իշխանությունների դրդմամբ Իրանում կատարվեց պետական հեղաշրջում, որի արդյունքում նավթի արդյունահանման տերը դարձավ Միջազգային նավթային կոնտրոլիումը, որի անդամները ԱՄՆ-ի և եվրոպական երկրների նավթային ընկերություններն էին [2]:

1979 թ. տեղի ունեցավ իսլամական հեղափոխություն, որի առաջնահերթ գործը եղավ նավթարդյունաբերության ազգայնացումը, որի հետևանքով Իրանը հայտնվեց արևմտյան գերտերությունների սև ցուցակում: Նրանք սկսեցին տնտեսական և քաղաքական սանկցիաներ կիրառել Իրանի նկատմամբ: Սահմանափակվեցին Իրանին տրվող ֆինանսական միջոցները, արտահանման չափերը, նավթագազային ոլորտում արտասահմանյան ներդրումները: Գերտերությունների թողտվությամբ 1980 թ. իրաքյան զորքերը մտան Իրան՝ առաջին հերթին ոչնչացնելով նավթարդյունաբերության ենթակառուցվածքները: Իրաքի ռազմաօդային ուժերը ռմբահարում էին նավթավերամշակման ձեռնարկությունները, նավթահորերը, Պարսից ծոցում սկսվեց, այսպես կոչված, «տանկերային պատերազմը», որի հետևանքով իրանական նավթատար նավատորմը հասավ կործանման եզրին: Պատերազմի ընթացքում ավերվեց աշխարհի խոշորագույն նավթաքիմիական համալիրներից մեկը Աբադանում:


Իրանա-Իրաքյան պատերազմից հետո Իրանում սկսվեց նավթարդյունաբերության վերականգնումը: Միաժամանակ նավթային գործոնից ավելի քիչ կախվածություն ունենալու համար զարկ տրվեց սև և գունավոր մետաղաձուլության, մեքենաշինության, սարքաշինության, թեթև և սննդի արդյունաբերության զարգացմանը: Սկսվեց վնասաբեր փոքր ձեռնարկությունների սեփականաշնորհումը:

Տնտեսական, քաղաքական մեկուսացումից դուրս գալու, արտասահմանյան կապիտալի ներհոսքը խրախուսելու համար սկսեցին նավթով և գազով հարուստ շրջաններում ստեղծել ազատ տնտեսական գոտիներ: Ընդ որում, հայրենական կապիտալը սկսեց ներդրվել երկրի ներքին շրջաններում,

արտասահմանյանը՝ առափնյա: Իրանի նավթի 40 խոշոր ավազաններից 27-ը գտնվում են առափնյա շրջաններում:

Իրանի նավթային ռեսուրսները գրավիչ են արտասահմանյան ընկերությունների համար իրենց մեծ կարողությունների շնորհիվ: Աշխարհի նավթի 15 խոշորագույն հանքավայրերից հինգը՝ Ֆերդոսը, Ագադեգանը, Էսֆանդիարը, Ահվազը և Ադա-Յարի Ֆիլդը, գտնվում են Իրանում:

Իրանի նավթի պաշարներն ունեն ավելանալու միտում: 2001 թ. Իրանի հետախուզված պաշարները եղել են 99 մլրդ. բարել (15,9 մլրդ. *տ*), 2010 թ.՝ 137,6 մլրդ. բարել (21,9 մլրդ. *տ*): Իրանը աշխարհում չորրորդ տեղն է գրավում նավթի հանույթով: 2010 թ. արդյունահանվել է 242 մլն. *տ* նավթ, որից 128,2 մլն. *տ* արտահանվել է, մնացածը՝ վերամշակվել տեղում: Իրանը տալիս է համաշխարհային շուկա արտահանվող նավթի 3,56%-ը, այն դեպքում երբ նրա պաշարները կազմում են համաշխարհայինի 10%-ը: Բացի դրանից, իրանական նավթը բարձրորակ է, մեծ են հանքաքեր ավազանների, հանքավայրերի, առանձին նավթահորերի կարողությունները: Երկրի տասը նավթաքեր ավազանները տալիս են երկրում արդյունահանվող նավթի 71,5% (171,1 մլն. *տ*), նրանցից խոշորագույններն են Ահվազի ավազանը 40,1 մլն. *տ* տարեկան կարողությամբ, Գազսարանը 32,5 մլն. *տ* կարողությամբ և այլն (տես նկ. 1):



Նկ. 1: Իրանի նավթաքեր ավազաններից արդյունահանվող նավթը (մլն. *տ*):


Իրանում մեծ աշխատանքներ են իրականացվում նավթավերամշակման կարողությունների մեծացման առումով: Նախատեսվում է եղած կարողությունները կրկնապատկել: Պատճառը երկրի ներսում նավթամթերքների պակասն է և պետության նպատակային քաղաքականությունը՝ հում նավթի արտահանումից աստիճանաբար պատրաստի արտադրանքի արտահանման անցումը:

Իրանում հատկապես ծանր է բենզինի խնդիրը: Երկրում տարեկան ծախսվում է 23,2 մլն. *տ* բենզին, որից 7,5 մլն. *տ* ներմուծվում է: Պետությունը բենզին սպառողների համար ունի վարկավորման ծրագիր: Ավտոտերերին զեղչ գներով բենզին տալու համար տարեկան ծախսվում է 18 մլրդ. դոլարից ավելի գումար (մեկ ավտոմեքենայի տիրոջը յուրաքանչյուր ամիս տրվում է

100 չ բեռնված, մեկ լիտրը 0,1 դոլարով): Բենզինի գեղջ գների վրա պետությունը ծախսում է նավթի արտահանումից ստացված եկամուտների 23,3%-ը:

Այժմ այդ արտոնությունները վերացնելու ծրագրեր են մշակվում:

Ներկայումս Իրանի նավթավերամշակումը կատարվում է ինը խոշոր կենտրոններում. Աբադանում՝ տարեկան 20,3 մլն. տ, Սպահանում՝ 16,2 մլն. տ, Բանդար Աբասում՝ 13,4 մլն. տ և այլն (տես նկ. 2):



Նկ. 2: Իրանի նավթավերամշակման խոշորագույն կենտրոնները:

Նավթավերամշակման հզոր համալիրներ են կառուցվում Բուշերում, Կանգանում, ինչպես նաև Չինաստանում, Մալազիայում, Սինգապուրում, Ինդոնեզիայում:

Բնական գազի խոշորագույն շրջանը գտնվում է Պարսից ծոցի հարավում՝ Իրանի և Կատարի տարածքային ջրերում: Այսպես կոչված Հարավային ավազանի պաշարները գնահատվում են 56 տրիլիոն խ. մ, որից 14 տրիլիոն խ. մ գտնվում է Իրանի տարածքային ջրերում: Հարավային ավազանի գազաբեր շերտերը գտնվում են 3000 մ խորություններում: Այս գազաբեր ավազանից ոչ հեռու ցամաքային շրջանում կան նավթի մեծ պաշարներ: Նավթի և գազի արդյունահանումը և վերամշակումը ընդարձակելու համար այստեղ ստեղծվել են ազատ տնտեսավարման գոտիներ, որոնցում 2007–2009 թթ. ընթացքում արտասահմանյան ներդրումները կազմել են 36 մլրդ. դոլար: Նախատեսվում է շրջանը զարգացնել 28 փուլերով, կառուցելով նավթի ու գազի արդյունահանման ու վերամշակման մի քանի տասնյակ ձեռնարկություններ: Ըստ այդ նախագծի՝ միայն Բուշեր քաղաքում կառուցվել է 10 նավթագտման ձեռնարկություն: Նախագծի ավարտից հետո Իրանը 30 տարվա ընթացքում տարեկան կստանա 11 մլրդ. դոլարի օգուտ:

Բնական գազի մեծ պաշարներ կան Կասպից ծովի ավազանում, սակայն արդյունահանման և տեղափոխման համար չկան անհրաժեշտ ենթակառուցվածքներ: Եթե Ադրբեջանը և Կենտրոնական Ասիայի երկրները հնարավորություն ունեն իրենց գազը դեպի Եվրոպա փոխադրել Ռուսաստանի Դաշնության խողովակաշարերով, ապա Իրանը այդ հնարավորությունները չունի:

Ուսաստանում նախագծեր են մշակվում ընդարձակելու գազամուղների ենթակառուցվածքները Կենտրոնական Ասիայի գազի փոխադրումը մեծացնելու համար: 2002 թ. Տուսայեից մինչև Սամսուն կառուցվեց գազամուղ, մեծացնելով Կասպից ծովի գազի արդյունահանման հնարավորությունը: Ադրբեջանի և Թուրքիայի միջև պայմանագիր է կնքվել կառուցելու 630 մղոն երկարությամբ 1 մլրդ. դոլար արժողությամբ Բաքու-Էրզրում գազամուղը: Գազամուղների այս համակարգից կարող է օգտվել նաև Իրանը, մանավանդ որ Ադրբեջանը իր այսօրվա կարողություններով չի կարող ամբողջությամբ ապահովել Բաքու-Էրզրում գազամուղի լրիվ հնարավորությունը: Սակայն խնդիրը բարդանում է նրանով, որ դեռևս լուծված չէ Կասպից ծովի նավթի և գազի կարգավիճակը, առկա են հակասություններ ավազանի երկրների միջև, ինչը ռիսկային է դարձնում մեծ կապիտալ ներդրումները:

Այսպիսով, Իրանի նավթի և գազի հետ կապված դժվարություններն ունեն ներքին և արտաքին պատճառներ:

Ներքին պատճառները ճյուղի ենթակառուցվածքների անբավարար մակարդակն է, արտադրության վերին հարկերի զարգացվածության ցածր աստիճանը, երկրի ամբողջ տարածքում արտադրողական ուժերի անհավասար բաշխումը, նավթի և գազի արտահանումից ստացված գումարի ոչ նպատակային օգտագործումը:

Խնդրի լուծման ուղին նավթի և գազի ստեղծած հնարավորությունների նպատակային օգտագործումն է, տնտեսության համակողմանի զարգացումը:

Արտաքին պատճառները գերտերությունների կողմից Իրանի քաղաքական և տնտեսական շրջափակումներն են, տարածաշրջանային հակամարտությունները: Ուստի անհրաժեշտ է վարել ճկուն արտաքին քաղաքականություն՝ առանցքում դնելով Իրանի ազգային շահերը:

Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն

Ստացվել է 23.02.2011

Գրախոս՝ Ս.Ա. Մելքունյան

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. **Нартов Н.Я., Нартов В.Н.** Геополитика. М., 2007, с. 431.
2. **Мировая экономика** (под ред. А.С. Булатова). М., 2005, с. 381.

А. Р. АВАГЯН, МАНДАНА ФАТИДЖО

РОЛЬ НЕФТИ И ПРИРОДНОГО ГАЗА ИРАНА В РАЗВИТИИ СТРАНЫ

Резюме

Иран является одним из крупнейших нефтегазовых регионов мира. Несмотря на увеличение объемов эксплуатации, запасы ресурсов продолжа-

ют расти. Однако прибыли от использования нефти и природного газа недостаточны. Для их увеличения необходимо следующее: сокращение экономического и политического давления сверхдержав, решение территориальных проблем, рациональная внутренняя региональная политика, увеличение объемов экспорта нефти, природного газа и нефтепродуктов.

A. R. AVAGYAN, MANDANA FATIJO

ROLE OF OIL AND NATURAL GAS OF IRAN IN THE
DEVELOPMENT OF THE COUNTRY

Summary

Iran is one of the greatest oil and gas areas. In spite of great volumes of exploitation the quantity of resources continues to increase.

The incomes from natural gas and oil use and exploitation are not enough. To solve the problems must be – reducing the economic and political pressure of “super states”, resolving the territorial conflicts, rational inner regional policy, increasing the volume of oil, gas and oil products export.